

տութեան տնտեսական կամ կուլտուրական գործունէութիւնը Փոքր Ասիայում շահաւէտ լինի քրիստոնեայ ազգարնակութեանը՝ այդ մի խիստ ցանկալի և ուրախալի միութարանք կը լինի տաճկահայերի համար, սակայն քաղաքական տեսակէտից տաճկահպատակ հայերի տղբալի գրութիւնը թեթեացնելու համար ամենամեծ արժէքը կունենայ Ռուսաստանի բարեկամութիւնը և պաշտպանութիւնը:

Պր. Մելիք-Աարագեօզեան զուր տեղը շեշտում է գլխաւորապէս Հիլֆսրունդի մարդասիրական, քրիստոնէական և իրէալական սքանչելի յատկութիւնները: Իրաւ որ Գերմանիայում կան շատ բարեսիրտ անհատներ, որոնք կոտորածների և աղէտների թշուառ զոհերի վերաբերմամբ տոգորուած են այդ տեսակ զգացմունքներով, սակայն «Օգնութեան Միութիւնը» իրրե դործող ամբողջութիւն բնականաբար խիստ լուրջ ցանկութիւն ունի իւր գործունէութիւնը Արևելքում յարմարեցնելու Գերմանիայի տնտեսական և քաղաքական շահերին: Իրրե ապացոյց կարող ենք մէջ բերել նոյն այս գրքից Յելլերի մի հետաքրքիր յօդուածը, ուր ի միջի այլոց ասուած է, որ «(Օգնութեան Միութիւնը) ամենեին անտարբեր չէ դէպի Գերմանիայի տնտեսական և քաղաքական շահերի յաջողութիւնը ընդհակառակը նա դիմել է մի անգամ այդ կառավարութեանը, խնդրելով ցոյց տալ նորան այն ճանապարհը, որով պիտի նա շարունակէ ընթանալ, ներդաշնակելով իւր քայլերը իշխանութեան ցանկութեան հետ» („Das Reich Christi“, Juni, 1899):

Մեր վերոյիշեալ կարծիքները գերմանական բողոքական եկեղեցւոյ միտումաւոր գործունէութեան մասին բնաւ չեն արգելում երախտապարտ լինելու գերմանացիներին այն բանի համար, որ նոքա հազարաւոր որբեր և տառապեալներ աղատեցին մահուան ճանկերից:

Խիստ ավստոսում ենք, որ պր. Մ. Ա.-ի այս բարեխիղճ հետազօտութեան լեզուն զգալի թերութիւններ ունի:

Յակոբ Մանանդեան

«Էմիլնեան Ազգագրական Ժողովածու» հրատ. Լազարեան ձեմարանի. Հասոբ Բ. Ժողովրդական վեպ եւ հեքեաք, հաւաքեց Ս. Հայկունի: Մոսկուա-Վաղարշապատ, 1901, 80, էջ III—X, 3—447 (գիմն է 1 ռուբլի 25 կոպ.):

Ներկայ գիրքը «Էմիլնեան Ազգագրական Ժողովածուի» երկրորդ հատորն է կազմում: Պր. Ս. Հայկունի ժողովրդական բանահիւսութեան վերաբերեալ անսպառ նիւթեր ունի հաւաքած: Ժողովածուի-

խմբագրութեան կողմից պր. Գ. Խաչատրեան յայտնում է, որ բացի այս հաւաքածուից մի գիրք ևս պիտի յատկացուի պր. Հայկունու գրի առնուած հէքեաթներէ բաժնին, «իսկ երրորդ գիրքը կը նուիրուի հայ ժողովրդի բերանում շրջող քրդական վէպերին, որ առանձին կարեւորութիւն ունին»:

Արդէն լոյս տեսած Բ. հատորը երկու մասի է բաժանուած՝ Ա. Ժողովրդական վէպ, Բ. Ժողովրդական հէքեաթ. Առաջին բաժինը պարունակում է հետեւեալ նիւթերը. էջ 3) Սանասար և Բաղդասար (Մոկաց միտղ), 19) Գաւիթ և Մհեր (Մոկաց միտղ), 51) Յուսէփ բէկ և Ծաղիկ խանում (Արձաշի բարբառով), 63) Ապուղէթ (Բուլաղի բարբառով), 73) Խաչատար (Գրական լեզուով), 89) Շիրին շահ և Բահր (Կուրապի բարբառով), Իսկ երկրորդ մասում զետեղուած ժողովրդական հէքեաթները սորա են. Կուրապի բարբառով—107) Լաւազար, 115) Միթիլ խաւք, 124) Փոկոտն (Պալտրղայիշ), 135) Բարբառ. Զարսանձաղի բարբառով—151) Ճուկօ և Ճէյրան, 163) Բըլէլ աղջիկ, 183) Ամպ (Տուման), 198) Գորտ, 216) Կրակոտ ոսպ (Աթաշի Մէրճիմէք), 228) Զիլ ու Քեօսէ, 233) Արտուճ և Խաղաղ թագաւոր, 241) Ճամին քաղաքը և Շղթայահատ, 257) Որսորդ Հայրապետ, 267) Բժիշկ Լոխման, 276) Գշխոյն Հեղինէ և Գիքուն. Ապարանայ բարբառով—284) Աւազակապետ Իսկէնտեր և Օս թագաւոր. Կոսայից բարբառով—289) Աղբեր-տղա և Քառսուն ծամ փարի. Խոյնցոց բարբառով—300) Որսորդ Մուրատ. Այիճան գիւղի բարբառով—305) Յելուզակ թագուհին. Գրանբայ գիւղի բարբառով—315) Անհաւատարիմ և հաւատարիմ կիները. Արձաշի բարբառով—318) Անձը պողպատ (Զան փօլատ). Բաղշու բարբառով—321) Զուլալ աստղ և Նռան հատ ու Ոսկեծամ, 333) Գարչին և իրեք չարէք. Արաշիտի բարբառով—337) Իրեք քօսայ ու տուն աւիրող Յարօն, 343) Զախճպան Գիլան, 345) Տէրտէր ու Աճամ աղբեր, 348) Փըշկօ-նընձօ. Խարայ բարբառով—353) Արար աշխարհի գեղեցկուհին (Գունեայ Գիւղալի), 361) Ուստա Մուրատ, 370) Հաճի Սայաթ, 376) Սինամ թագաւոր և Գիւլ, 382) Գարգոտ ու Մուրատ, 385) Խեղճ ու զալմ աղբեր, 387) Օխէշ, Բուլաղիայ բարբառով—390) Օխէշ, 395) Բաց, սև քարս, 401) Հուրնիկ և Հրեղէն, 417) Անխօս աղջիկ, 422) Խիկարի խըսէն. Արձաշի բարբառով—428) Կնիկը ջորիի փսխուած. Վանայ բարբառով—432) Մարգրտաշար. Մոկաց բարբառով—443—447) Խօճա Յիւսեփի Գեառնիկ տղէն:

Ժողովրդական բանահիւտութեան այս բոլոր նիւթերը—բացի «Խաչատրեան» ից, որ գրական լեզուով է պատմուած—գրուած են զանազան բարբառներով՝ Մոկաց, Արձաշի, Բուլաղիայ, Կուրապի, Զարսանձաղի, Ապարանայ, Կոսայից, Խոյնցոց, Ալիճան գիւղի, Գրամբայ գիւղի, Բաղշու, Ալաշկերտի, Խալթայ և Վանայ: Սակայն սորա չեն կարող

ծառայել իրրև լեզուագիտական նիւթ հայկական բարբառների ուսումնասիրութեան համար, որովհետև ինչպէս պր. Գ. Խալաթեանն էլ ինքը ուղիղ նկատում է՝ սորա գրի շին առնուած յատկապէս լեզուաբանական նպատակով, և երկրորդ (և այս ամենէականն է)՝ բարբառախօսական նիւթեր հաւաքողը անպատճառ հմուտ պիտի լինի լեզուագիտութեան և հնչիւնագիտութեան, իսկ պր. Հայկունի դժբախտաբար զուրկ է մասնագիտական նախապատրաստութիւնից, Պար. Հայկունու գիրքը կարևոր է միմիայն իւր բովանդակութեամբ և այս աշխատութիւնից կարող են օգտուիլ ժողովրդական բանահիւտութիւն և աղգագրութիւն ուսումնասիրողները: Այս տեսակէտից Լազարեան ճեմարանի նոր հրատարակութիւնը և սրա ծերունի աշխատասէր հեղինակը արժանի են ամենայն գովասանքի:

Գրքի տպագրութիւնը բաւական մաքուր և գեղեցիկ է: Չենք հասկանում թէ ինչո՞ւ պր. Խալաթեան ո՛չ մի տեղ առաջարանում չէ յիշել, որ այս գիրքը տպուած է Էջմիածնայ Մայր Աթոռի տպարանում: Մի՞թէ հայերիս համար ուրախալի չէ շեշտել Մայր Աթոռի իւրաքանչիւր գովասանքի արժանի առաջագիմութիւնը:

Յ. Մ.

Մեսրոպ Մաեսոց. Կազմեց Ե. Թ. Հրաս. Յովհաննէս Արամեանցի. 1 պատկերով. Ալեքսանդրապոլ. 1901. 80, էջ 5—32 (գիճն է 5 կոպ.):

Բեօրնուօն. Կազմեց Ե. Թոփչեան. Հրաս. Յովհաննէս Արամեանցի. 1 պատկերով. Ալեքսանդրապոլ. 1901. 80, էջ 5—42 (գիճն է 10 կոպ.):

Մանմեդ. Կազմեց Ե. Թ. Հրաս. Յովհաննէս Արամեանցի. 2 պատկերով. Ալեքսանդրապոլ. 1901. 80, էջ 5—35 (գիճն է 7 կոպ.):

Յովհաննէս Արամեանցի հրատարակութեամբ լոյս են տեսել Եղիշէ Թոփչեանի կազմած Մեսրոպ Մաշտոցի, Մահմաթի և Բեօրնուօնի կենսագրութիւնները, իսկ շուտով հրատարակուելու են Սահակ Պարթև, Իրսէն և Հաուպտման, Պ. Ե. Թոփչեանի այս փոքրիկ գրքոյկները բաւական սահուն լեզուով գրուած կոմպիլացիաներ են: Մի փոքր անյաջող է Մեսրոպ Մաշտոցի կենսագրութիւնը և գրերի գիւտի պատմութիւնը, որովհետև հեղինակը՝ նախ՝ ծանօթ չէ բանասիրութեան յարուցած խնդիրներին գրերի գիւտի մասին, երկրորդ՝ նա իւր աշխատութեան մէջ կրկնում է իրրև ճշմարտութիւններ բանասէրներին սխալ և անընդունելի ենթադրու-